ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝**
   Կարեն Անդրեասյան, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ
   Արտյոմ Սուջյան, Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**
   Նիդերլանդների Թագավորություն, Հաագա, 2026 թվականի ապրիլի 5-ից 10-ը ներառյալ (Կարեն Անդրեասյան), 2026 թվականի ապրիլի 6-ից 10-ը ներառյալ (Արտյոմ Սուջյան)

3. **Հրավիրող կողմը՝**
   Արբիտրաժային մշտական դատարան (PCA)

4. **Գործուղման նպատակը և իրականացված աշխատանքները՝**
   Գործուղման գլխավոր նպատակն էր մասնակցել ապրիլի 7-ից 9-ը Նիդերլանդների Թագավորության Հաագա քաղաքում գտնվող Արբիտրաժային մշտական դատարանում (այսուհետ՝ Դատարան) Էներգետիկ խարտիայի պայմանագրի շրջանակներում քննվող «*Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի» (PCA Case No. 2023-65)* գործով բանավոր լսումներին (դատական նիստեր), որոնց շրջանակներում քննարկվեցին Դատարանի իրավազորությանը վերաբերող հարցերը: Հարկ ենք համարում հայտնել, որ ՄԻՀՆ գրասենյակի կողմից ՀՀ միջազգային իրավախորհրդատուների հետ համատեղ մշակված և 2024թ. դեկտեմբերի 12-ին ներկայացված վարույթի երկատման վերաբերյալ Հայաստանի դիմումը բավարարվել էր Դատարանի՝ 2025թ. փետրվարի 13-ի վճռով: Դատարանի նշված որոշման հիման վրա արդեն տեղի ունեցան համապատասխան լսումները, որի շրջանակներում գրասենյակի և միջազգային իրավախորհրդատուների թիմի համատեղ աշխատանքի արդյունքում մանրամասն ներկայացվեցին ՀՀ առարկությունները դատարանի իրավազորության հարցի վերաբերյալ՝ պնդելով Ադրբեջանի ներկայացրած գործով բարձրացված հարցերը քննելու Դատարանի իրավազորության բացակայությունը, ելույթներով հանդես եկավ նաև Միջազգային իրավական ՀՀ ներկայացուցիչը: Տրիբունալը լսեց նաև Ադբեջանի ներկայացուցիչների հակափաստարկները: Արդյունքում հարցի

վերբերյալ լսումներն ավարտվեցին և տրիբունալը հեռացավ իրավազորության հարցի վերաբերյալ որոշում կայացնելու:

Միաժամանակ, օգտվելով առիթից, միջազգային իրավախորհրդատուների թիմի հետ առանձին մի շարք քննարկումներ անցկացվեցին այս և այլ վարույթներով ՀՀ շահերի արդյունավետ պաշտպանությանն ուղղված գործողությունների, դրանց բովանդակության և ռազմավարության վերաբերյալ:

Արտյոմ Սուջյան

Recoverable Signature

X

ԱՐՏՅՈՄ ՍՈՒՋՅԱՆ

Signed by: SUJYAN ARTYOM 3507970490

14.04.2026թ.